ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳ

Մեծ յոթնյակի «Վերակառուցենք ավելի լավ աշխարհ» ծրագիրը որպես չինական «Գոտի եւ Ճանապարհ» նախաձեռնությանը հակազդող գործիք

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Բրյուսովի անվան պետական համալսարան

ԱՆԱՀԻՏ ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բրյուսովի անվան պետական համալսարան

ԱԻԴԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Բրյուսովի անվան պետական համալսարան

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել 2021թ. հունիսին «Մեծ յոթնյակի» գագաթնաժողովի ժամանակ հայտարարված «Վերակառուցենք ավելի լավ աշխարհ» (Build Back Better World «B3W») համաշխարհային ենթակառուցվածքային նախագծի առանձնահատկություններն ու հիմնական սկզբունքները: Առանձնահատուկ ընդգծվում է վերջինիս հեռանկարը՝ դառնալու չինական «Գոտի և ճանապարհ» («BRI») նախաձեռնության համար լրջագույն մարտահրավեր: Հոդվածվում բացահայտվում է նաև Աֆղանստանից ԱՄՆ զորքերի դուրսբերման հետևանքները չինական «BRI» նախագծի համար: Առաջադրված նպատակին հասնելու համար ուսումնասիրվում են հետևյալ խնդիրները՝ «B3W» նախագծի ներուժի, մարտահրավերների և խոչընդոտների բացահայտումը, չինական «BRI» նախաձեռնության հետ հնարավոր մրցակցության հեռանկարները, ինչպես նաև «B3W» նախագծում Հայաստանի ներգրավման հնարավորությունները:

Բանալի բառեր
ԱՄՆ, Չինաստան, աշխարհաքաղաքական մրցակցություն, Մեծ յոթնյակ,

Նախաբան

Շուրջ մեկ տարի առաջ սույն հոդվածի հեղինակների կողմից իրականացված հետազոտությունների արդյունքում առաջ քաշվեց

վարկած, որ ԱՄՆ-ը և նրա դաշնակիցները ամենասեղմ ժամկետներում կիրառելու են բոլոր հնարավորությունները, որպեսզի զսպեն Չինաստանի աճող ազդեցությունը Կենտրոնական Ասիայում, Մերձավոր Արևելքում, Հարավային Կովկասում և այլ տարածաշրջաններում, մասնավորապես «Գոտի և ճանապարհ» մեգանախաձեռնության զսպմամբ։[1]

«Չինաստանի ձգտումը գլոբալ գերտերության կարգավիճակի և ԱՄՆ դիմադրությունը» հոդվածում նշվում էր. «...մրցակցության առաջնային թատերաբեմերից է լինելու Կենտրոնական Ասիան, քանի որ այս տարածաշրջանը կարևորագույն նշանակություն ունի չինական «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության համար...»։ Միաժամանակ պնդում կար, որ

> *«Չինաստանը շարունակում է ընթացքը դեպի այդ կարգավիճակ՝ ազդեցությունը տարածելով Ասիայում, Եվրոպայում և այլ տարածաշրջաններում։ Այս ճանապարհին Չինաստանը շարունակաբար կիրառելու է փափուկ ուժի և ներդրումային քաղաքականության ողջ գործիքակազմը։ Ազդեցության տարածման հիմնական մեթոդը լինելու է խոշոր ներդրումային քաղաքականության իրականացումը։ Հիմնական թիրախներն են լինելու ենթակառուցվածքային ներդրումները, հատկապես, երբ դրանք փոխկապակցվելու են «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության հետ»։*[2]

Որպես այս ամենի հակակշիռ դիտարկվում էր ամերիկյան ակտիվացման անխուսափելիությունը։ Ըստ հեղինակների,

> *«ԱՄՆ-Չինաստան կոշտ մրցակցությունը շարունակական է լինելու հաջորդող 3 տասնամյակների համար։ Համաշխարհային թիվ մեկ գերտերության կարգավիճակը ԱՄՆ-ն հեշտությամբ չի զիջելու Չինաստանին և այդ*

---

[1] **Սարգսյան Ս., Գևորգյան Ա., Մուրադյան Ա.,** Չինաստանի ձգտումը գլոբալ գերտերության կարգավիճակի և ԱՄՆ դիմադրությունը, Հայկական Քաղաքագիտական Հանդես, 2020, **2**, 14, էջ 95- 132:

[2] Նույն տեղում:

մրցակցության ճանապարհին կիրառելու է բոլոր հնարավոր մեթոդները՝ չինական վերելքը կանխելու կամ արագ ընթացքը կոտրելու համար: Տարատեսակ պատժամիջոց-ներից մինչև ճնշումներ՝ կապված Չինաստանի ներքին խնդիրների հետ: Սրանք լինելու են Չինաստանի նկատմամբ ճնշումներ գործադրելու հիմնական գործիքները: ԱՄՆ համակ ուշադրության կենտրոնում են լինելու Չինաստանի ազգային և կրոնական փոքրամասնությունների հետ կապված խնդիրները, որոնք ԱՄՆ-ը համարում է Չինաստանի աքիլեսյան գարշապարը: ԱՄՆ-ը ճնշումներ է կիրառելու ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ հարթակներում՝ Կրոնական ազատության միջազգային դաշինքից մինչև ՄԱԿ և այլ կառույցներ: Չի բացառվում, որ ԱՄՆ-ը ցեղասպանություն որակի Չինաստանի գործողու-թյունները՝ կապված ույղուրների հետ, ինչը լրացուցիչ ճնշման գործիք կդառնա միջազգային հանրության ձեռքում [ինչը իրականում տեղի ունեցավ Թրամփի վարչակազմի օրոք]: Ակնհայտ է, որ ԱՄՆ-ում ընկալում են «Գոտի և ճանապարհ» նախագծի ողջ կարևորությունն ու ազդեցությունն ամբողջ եվրասիական տարածաշրջանի համար՝ բոլոր քաղաքական և տնտեսական լծակներով հանդերձ, որոնք Չինաստանը ձեռք է բերելու որպես հիմնական ներդրող և նախաձեռնող»:[3]

Այսպես, 2021թ. հունիսին «Մեծ յոթնյակի» երկրների հերթական հավաքի ժամանակ հայտարարվեց «Վերակառուցենք ավելի լավ աշխարհ» (Build Back Better World) («B3W») նախագծի մասին, որի հիմնական նպատակն էր զսպել չինական աճող ազդեցությունը:[4]

---

[3] Նույն տեղում:

[4] Carbis Bay G7 Summit Communiqué, June 13, 2021, https://www.whitehouse.gov/briefing-room/statements-releases/2021/06/13/carbis-bay-g7-summit-communique/, (13.09.2021).

Չինաստանի նկատմամբ ԱՄՆ քաղաքականության փոփոխությունը. Ներգրավվածությունից մրցակցություն

ԱՄՆ-Չինաստան մրցակցությունը աշխարհում ազդեցության տարածմանը, հարստության և սեփական հեգեմոնիան հաստատելուն ուղղված լայնածավալ ռազմավարական մրցակցություն է: Վերջինիս բնորոշ են քաղաքական կառավարման և տնտեսական մրցակցության հակադիր իդեալները և մոդելները, աշխարհակարգի կառուցվածքի վերաբերյալ տարբերվող տեսակետները և միմյանց հակասող շահերը: Կողմերից յուրաքանչյուրը ձգտում է առավելագույնի հասցնել իր համաշխարհային դիրքը և ազդեցությունը:[5]

Այնուամենայնիվ, ԱՄՆ-Չինաստան հարաբերությունների հիմքում չի եղել մրցակցությունը: Երկու երկրների հարաբերությունների սկզբնավորման հիմքում ընկած է եղել ներգրավման քաղաքականությունը, այլ ոչ մրցակցայինը: Չինաստանի ներգրավման քաղաքականության սկիզբը երկու երկրների միջև հարաբերությունների հիմնադրումն է, երբ ԱՄՆ Անվտանգության խորհրդի խորհրդական Հենրի Քիսինջերը գաղտնի առաքելություն կատարեց Չինաստան: Այդ 48 ժամ տևած ճամփորդությունը հետագայում ճանապարհ հարթեց Ռիչարդ Նիքսոնի և Մաո Ցզեդունի ձեռքսեղմման համար:[6] Ներգրավման քաղաքականությունը հիմնված էր այն գաղափարի վրա, որ Չինաստանին տնտեսապես աջակցելը և այն միջազգային համակարգում ինտեգրելը կխթանի քաղաքական փոփոխություններին՝ երկիրը մղելով ժողովրդավարության ուղղությամբ: 2021թ. ԱՄՆ նախկին

[5] **Lippert B.**, **Perthes V**., (eds.) “Strategic Rivalry between United States and China Causes, Trajectories, and Implications for Europe,” *SWP Research Paper*, April 4, 2020, https://www.swp-berlin.org/publications/products/research_papers/2020RP04_China_USA.pdf, (13.10.2021).

[6] **Ni V.,** Cold war or uneasy peace: does defining US-China competition matter?, 11 June 2021, https://www.theguardian.com/world/2021/jun/11/cold-war-or-uneasy-peace-does-defining-us-china-competition-matter, (13.10.2021).

պետքարտուղար Քիսինջերի՝ Չինաստան ուղևորության 50-ամյակին նվիրված միջոցառմանը նա հիմնավորեց Չինաստանի նկատմամբ իրականացվող ներգրավվածության քաղաքականությունը, որը Վաշինգտոնը պաշտպանել է տասնամյակներ շարունակ: Քիսինջերը Չինաստանի փոխնախագահ Վան Քիշանի հետ հեռահար հանդիպման ժամանակ մասնավորապես զգուշացրեց, որ Միացյալ Նահանգների և Չինաստանի միջև հակամարտությունը կբաժանի ամբողջ աշխարհը: «Եվ ազգերի այս կամ այն կողմն անցնելու փորձերը աշխարհում կստեղծեն պառակտում, գայթակղություններ և ճնշումներ, որոնք լուծելը կդառնա ավելի ու ավելի դժվար»: Սակայն ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը նույն օրը ներգրավման քաղաքականությանը հակասող ուղերձ հղեց՝ ազդարարելով, որ տասնամյակներ շարունակ գործող քաղաքականությունն այլևս կորցրել է իր ազդեցությունը: Միացյալ Նահանգները պետք է «կենտրոնանա Ամերիկայի հիմնական ուժերի հզորացման ուղղությամբ Չինաստանի և այլ երկրների հետ ռազմավարական մրցակցությանը դիմակայելու համար, որն իրապես որոշելու է մեր ապագան»:[7] Իր հերթին ԱՄՆ Ազգային անվտանգության խորհրդի հնդա-խաղաղօվկիանոսյան հարցերով համակարգող Քուրտ Քեմփբելն էլ նշել է, որ «ներգրավում կոչվող ժամանակաշրջանը իր ավարտին է հասել… գերակշռող պարադիգմը լինելու է մրցակցությունը»:[8]

Այդուհանդերձ, ներգրավման քաղաքականությունից անցումը մրցակցայինի առավել վառ դրսևորում է ստացել նախկին նախագահ Թրամփի կողմից: Վերջինիս օրոք հրապարակված 2017թ. ԱՄՆ Ազգային անվտանգության ռազմավարությունը պատմական դարձավ Չինաստանի նկատմամբ ԱՄՆ քաղաքականության առումով: Սպիտակ տունը բացահայտորեն

[7] **Nagasawa Ts., Hadano Ts.,** Kissinger's spell on China policy fades 50 years after visit, Nikkei Asia, July 10, 2021, https://asia.nikkei.com/Politics/International-relations/Kissinger-s-spell-on-China-policy-fades-50-years-after-visit, (13.10.2021).

[8] **Martin P.,** Biden’s Asia Czar Says Era of Engagement With China Is Over, Bloomberg, 27 May, 2021, https://www.bloomberg.com/news/articles/2021-05-26/biden-s-asia-czar-says-era-of-engagement-with-xi-s-china-is-over, (13.10.2021).

քննադատեց նախորդ վարչակազմերի քաղաքականությունը՝ համարելով դրանք ձախողված, և վերջ դրեց ներգրավվածության քաղաքականությանը՝ որպես ԱՄՆ-Չինաստան հարաբերությունների առաջնային մոտեցում: Մինչ Թրամփի վարչակազմը ԱՄՆ քաղաքականությունը հիմնված էր այն ենթադրության վրա, որ Չինաստանը կարող է սոցիալականացվել Արևմուտքի միջազգային ինստիտուտներում ներգրավվելու միջոցով: Ներգրավումը պետք է տեղի ունենար բոլոր մակարդակներում՝ առևտրի, գիտական, ռազմական, դիվանագիտական, կրթական և ժողովուրդների միջև կապի, ինչը և ակնկալվում էր, որ կհամոզի Չինաստանի առաջնորդներին ընդունել ազատական միջազգային համակարգը: Այս ենթադրությունը գործել է ԱՄՆ յոթ նախագահների պաշտոնա-վարման ընթացքում[9], բայց 2017թ. Ազգային անվտանգության ռազմավարության մեջ Թրամփի վարչակազմը առավել կոշտ մոտեցում որդեգրեց Չինաստանի նկատմամբ՝ համարելով, որ Չինաստանը մարտահրավեր է նետում «ամերիկյան հզորությանը, ազդեցությանը և շահերին՝ փորձելով խարխլել ամերիկյան անվտանգությունն ու բարեկեցությունը»: Ներգրավման քաղաքա-կանության առումով այն ակնկալիքները, որ «հակառակորդների ներգրավումը և նրանց ներառումը միջազգային ինստիտուտներում և համաշխարհային առևտրի մեջ նրանց կդարձնի մեղմ դերակատարներ և վստահելի գործընկերներ, մեծապես պարզվեցին, որ կեղծ են»:[10]

[9] **Mattis P.,** From Engagement to Rivalry: Tools to Compete with China, The Strategist, 2018, **1**, 4, pp. 81-94.

[10] National Security Strategy of the United States of America, december 2017, https://trumpwhitehouse.archives.gov/wp-content/uploads/2017/12/NSS-Final-12-18-2017-0905.pdf, (13.10.2021).

«Վերակառուցենք ավելի լավ աշխարհ» նախագծի առանձնահատկությունները և հիմքում ընկած սկզբունքները

Հասկանալու համար թե ինչպես կարող է «B3W» նախագիծը դառնալ հակակշիռ «Գոտի և ճանապարհ» («BRI») նախաձեռնության համար, նախ պետք է պարզել, թե որն է «B3W» նախագծի էությունը և այն մասշտաբները, որ վերջինս ընդգրկելու է։

«B3W»-ն նոր նախագիծ է, որի էությունը դեռևս նոր է ուրվագծվում։ Նախագծի գաղափարը ծագել է Մեծ Բրիտանիայի վարչապետ Բորիս Ջոնսոնի և ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի զրույցի ժամանակ, որի ընթացքում նրանք քննարկել են «B3W»-ի ձևավորումը և կարգախոսը։ «B3W»-ի առաջ քաշումով նպատակ է հետապնդվում ստեղծել գործնականում հավակնոտ մի ծրագիր, որի հիմքում ընկած է մեկ այլ նմանատիպ ծրագիր՝ «Blue Dot Network»-ը, որը նախաձեռնվել էր դեռևս նախագահ Թրամփի օրոք։ Վերջինս նախաձեռնող երկրների թվում են ԱՄՆ-ը, Ճապոնիան և Ավստրալիան։ Որպես նպատակ սահմանվել էր որակյալ ենթակառուցվածքային ներդրումների խթանումը, որոնք կլինեն բաց, թափանցիկ, տնտեսապես կենսունակ, Կլիմայի մասին Փարիզյան համաձայնագրին համապատասխան, ֆինանսապես, շրջակա միջավայրի նկատմամբ և սոցիալապես կայուն և միջազգային օրենքներին ու կարգավորումներին համապատասխան։ Այդ նպատակներին հասնելու համար նախագիծը պետք է վավերացներ ենթակառուցվածքային ծրագրերը մի շարք չափանիշների և ստանդարտների հիման վրա։ Վավերացման համար համապատասխան մեթոդաբանությունն ու չափման համակարգը մշակվելու էր ԱՄՆ-ի, Ավստրալիայի և Ճապոնիայի կողմից՝ ելնելով վերոնշյալ սկզբունքներից։[11] Ամերիկյան կողմից ծրագիրն իրականացվում է ԱՄՆ Միջազգային զարգացման ֆինանսական կորպորացիայի միջոցով, իսկ Ճապոնիայի և Ավստրալիայի կողմից՝ համապատասխանաբար Միջազգային

[11] Blue Dot Network, https://www.state.gov/blue-dot-network/, (07.10.2021).

համագործակցության ճապոնական բանկի և Ավստրալիայի արտաքին գործերի և առևտրի դեպարտամենտի ֆինանսների զարգացման բաժնի կողմից: Այս երեք երկրների կառավարություն-ները մատնանշել են, որ ծրագրում կարող են ներգրավվել այն երկրները, որոնք աջակցում են բարձրորակ, մասնավոր սեկտորի կողմից առաջնորդվող ներդրումների վրա հիմնված իրենց առաքելությանը:[12]

Ըստ էության, նախագահ Բայդենը շարունակում է գործել նույն տրամաբանությամբ՝ իր «Վերակառուցենք ավելի լավ» օրակարգի շրջանակներում: Նույնանուն կարգախոսը Բայդենն օգտագործել էր նախագահական ընտրությունների քարոզարշավի ժամանակ:[13] Այժմ արդեն իսկ նախագահ Բայդենը ակտիվորեն առաջ է մղում իր «Վերակառուցենք ավելի լավ» օրակարգը, մասնավորապես համանուն ակտ ընդունելու միջոցով: Ակտը լինելու է ԱՄՆ հասարակության համար խոշորագույն ներդրում-ներից մեկը՝ կազմելով մոտ 3.5 միլիարդ ԱՄՆ դոլար: Ակտի վերջնական տարբերակը դեռևս պատրաստ չէ, սակայն դրանով Բայդենը նպատակ ունի ստեղծել աշխատատեղեր, կրճատել հարկերը և նվազեցնել ծախսերը աշխատող ընտանիքների համար: Ակտի շուրջ առաջին քվեարկությունը հաջողության չհասավ, և Սենատի մեծամասնության ղեկավար Չաք Շումերը և Ներկայացուցիչների պալատի խոսնակ Նենսի Փելոսին սահմանեցին ակտն ընդունելու նոր վերջնաժամկետը, որը հոկտեմբերի վերջն է:[14]

---

[12] **Kuo M.,** Blue Dot Network: The Belt and Road Alternative, thediplomat.com/2020/04/blue-dot-network-the-belt-and-road-alternative/, (14.09.2020).

[13] Background Press Call by a Senior Administration Official After G7 Plenary Session Two, June 12, 2021, https://www.whitehouse.gov/briefing-room/press-briefings/2021/06/12/background-press-call-by-a-senior-administration-official-after-g7-plenary-session-two/, (13.09.2021).

[14] **Smith K.,** What's The Build Back Better Plan? *Forbes,* October 6, 2021, https://www.forbes.com/advisor/personal-finance/whats-the-build-back-better-plan/, (09.10.2021).

«B3W» ծրագիրը պետք է դիտարկել Բայդենի «Վերակառուցենք ավելի լավ աշխարհ» օրակարգի շրջանակներում, սակայն համաշխարհային թատերաբեմում՝ որպես Չինաստանին հակազդեցության ծրագիր: Այս հավակնոտ նախագիծը հրապարակավ հայտարարվեց «Մեծ յոթնյակի» գագաթնաժողովի ժամանակ 2021թ. հունիսի 11-13-ին Մեծ Բրիտանիայում: Արդեն հունիսի 12-ին Սպիտակ տունը հրապարակեց փաստաթերթիկ (factsheet), որում ավելի մանրամասն ներկայացվեց «B3W» ծրագիրը: Ըստ տրամադրված տեղեկատվության՝ «B3W»-ն «ցածր և միջին եկամուտ ունեցող երկրների հսկայական ենթակառուցվածքային կարիքները բավարարելուն ուղղված հավակնոտ նախաձեռ-նություն է»:[15]

Ըստ Համաշխարհային բանկի հաշվարկների մինչ 2035 թվականը զարգացող երկրներում 40+ տրիլիոն արժողությամբ ենթակառուցվածքների կարիք կլինի և նոր ձևավորված նախագծի նպատակն է օգնել հնարավորինս նվազեցնել այս ենթակառուցվածքային բացը, որն էլ ավելի է վատթարացել Կովիդ-19-ի պատճառով: Թեև շատ մանրամասներ դեռևս հայտնի չեն, ըստ ԱՄՆ վարչակազմի ավագ պաշտոնյաների, նախագիծը կունենա ապակենտրոնացված կառուցվածք, որտեղ «Մեծ յոթնյակի» երկրները և այլ համախոհ գործընկերներ կհամակարգեն մասնավոր կապիտալի ներգրավումը չորս հիմնական ոլորտներում. կլիմա, առողջություն և առողջապահական անվտանգություն, թվային տեխնոլոգիաներ և գենդերային հավասարություն ու հավասարություն:[16]

«B3W» նախագիծը արժեքների, բարձր չափանիշների և թափանցիկության վրա հիմնված ենթակառուցվածքային գործընկերություն է, որն իր մեջ ներառում է հետևյալ սկզբունքները.

---

[15] FACT SHEET: President Biden and G7 Leaders Launch Build Back Better World (B3W) Partnership, June 12, 2021, https://www.whitehouse.gov/briefing-room/statements-releases/2021/06/12/fact-sheet-president-biden-and-g7-leaders-launch-build-back-better-world-b3w-partnership/, (13.09.2021).

[16] Background Press Call by a Senior Administration Official After G7 Plenary Session Two, նշվ. աշխ.

Արժեքների վրա հիմնված: Ենթակառուցվածքների զարգացումը կիրականացվի ֆինանսական, էկոլոգիական, սոցիալական կայուն ձևով և կապահովի ֆինանսավորման թափանցիկ աղբյուրներ:

Լավ կառավարում և խիստ չափանիշներ: Նախագիծն իրականացվելու է բարձր չափանիշների և սկզբունքների համաձայն՝ շրջակա միջավայրի և կլիմայի, աշխատանքային և սոցիալական երաշխիքների, թափանցիկության, ֆինանսավորման, շինարարության, հակակոռուպցիոն և այլ ոլորտների տեսանկյունից:

Կլիմային չվնասող: Նախագծի շրջանակներում ներդրումները կիրականացվեն Փարիզի կլիմայական համաձայնագրի նպատակներին համապատասխան:

Ամուր ռազմավարական գործընկերություն: «Մեծ յոթնյակի» գործընկերների հետ կստեղծվի աշխատանքային խումբ՝ համակարգելու, ներդաշնակեցնելու նրանց գործողությունները և բարձրացնելու դրա ազդեցությունն ու տարածումը:

Մոբիլիզացնել մասնավոր կապիտալը զարգացման ֆինանսների միջոցով: Ենթակառուցվածքների ներդրումը կիրականացվի պատասխանատու և շուկայով կարգավորվող մասնավոր հատվածի և հանրայինբարձր չափանիշներով և թափանցիկ ֆինանսավորման հետ համատեղ:

Բազմակողմ հանրային ֆինանսների ազդեցության ընդլայնում: ԱՄՆ-ը ներդնելու է չափանիշներ՝ մշակված բազմակողմ զարգացման բանկերի և միջազգային այլ ֆինանսական հաստատությունների կողմից՝ ռեսուրսների պատշաճ և արդյունավետ օգտագործումն ապահովելու համար:[17]

«B3W» նախագիծը աշխարհագրական առումով ընդգրկում է բավական ընդարձակ տարածք՝ Լատինական Ամերիկայից և Կարիբյան ավազանից մինչև Աֆրիկա և Հնդկական ու Խաղաղ օվկիանոսներ:

[17] FACT SHEET: President Biden and G7 Leaders Launch Build Back Better World (B3W) Partnership, նշվ. աշխ.

Ինչ վերաբերում է նախագծի ֆինանսավորմանը «B3W»-ը նախատեսում է ներգրավել ԱՄՆ ֆինանսական այնպիսի հաստատություններ, ինչպիսիք են Զարգացման ֆինանսական կորպորացիան, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը («USAID»), Արտահանման-ներկրման ԱՄՆ բանկը («EXIM»), «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիան և ԱՄՆ առևտրի և զարգացման գործակալությունը և լրացուցիչ մարմիններ, ինչպիսին է օրինակ, Գործարքների խորհրդատվական ֆոնդը: Սա ենթադրում է, որ նախագիծը խթանելու է ԱՄՆ տնտեսությանն ու ստեղծելու նոր աշխատատեղեր: Թեև դեռևս շատ մանրամասներ նախագծի մասին առկա չեն, ըստ առկա տեղեկատվության՝ կապիտալը մոբիլիզացվելու է հանրային և մասնավոր հատվածներից, սակայն վերջինս կլինի ֆինանսավորման գլխավոր գործիքը:[18] Թեև փաստաթերթիկը շեշտում էր, որ ավելի շատ մանրամասներ կներառվեն «Մեծ յոթնյակի» առաջնորդների կոմյունիկեում, իրականում այնտեղ նոր տեղեկատվություն առանձնապես չկար: Կոմյունիկեն վերահաստատեց այն տեղեկատվությունը, որը ներառված էր Սպիտակ տան փաստաթերթիկում՝ նշելով, որ այն աշխատանքային խումբը, որը պետք է ստեղծվեր կոնկրետ առաջարկների ձևավորման համար, ԱՄՆ-ին և «Մեծ յոթնյակի» գործընկերներին պետք է զեկույց ներկայացնի աշնանը:[19]

Ծրագրի շրջանակներում արդեն իսկ իրականացվել է առաջին այցը՝ Լատինական Ամերիկա: Այցն իրականացվել է ԱՄՆ դիվանագիտական և զարգացման ոլորտի պաշտոնյաների պատվիրակության կողմից՝ Ջո Բայդենի Ազգային անվտանգության հարցերով խորհրդականի տեղակալի գլխավորությամբ: Պատվիրակությունը պետք է կյանքի կոչի «B3W» նախագիծը և սա առաջին այցն էր նախատեսված մի քանիսի թվում:[20]

---

[18] Նույն տեղում:

[19] Carbis Bay G7 Summit Communiqué, նշվ. աշխ.

[20] U.S. plans infrastructure projects in Latin America to counter China initiatives, NBS News, September 28, 2021, https://www.nbcnews.com/news/latino/us-plans-infrastructure-projects-latin-america-counter-china-initiativ-rcna2308, (09.10.2021).

«B3W»-ն որպես «Գոտի և ճանապարհ» («BRI») նախաձեռնության իրական այլընտրա՞նք

Չինաստանի կողմից 2013թ նախաձեռնած «BRI» ծրագիրը զգալի մարտահրավեր է հանդիսանում Միացյալ Նահանգների՝ աշխարհի դեռևս միակ գլոբալ գերտերության համար: Աշխարհում չինական ազդեցությանը հակազդելու համար Միացյալ Նահանգները մի շարք գործիքներ է կիրառել, որոնց թվում է նաև նոր ձևավորված համաշխարհային ենթակառուցվածքային «B3W» նախաձեռնությունը: ԱՄՆ վարչակազմի ավագ պաշտոնյայի պնդմամբ այս նախաձեռնությունը ոչ միայն «BRI»-ին այլընտրանք է, այլև այն «կհաղթի «BRI»-ին՝ առաջարկելով ավելի որակյալ ընտրություն»: [21]

Խոսելով «B3W» նախագծի մասին՝ նախագահ Բայդենը մատնանշել է, որ ինքն առաջարկել է «Գոտի և ճանապարհ նախաձեռնության ժողովրդավարական այլընտրանք»: Ըստ նրա՝ այս նախաձեռնության միջոցով նրանք, որպես այդպիսին հակասության մեջ չեն գտնվում Չինաստանի հետ, բայց այն մրցապայքար է «ամբողջ աշխարհում ավտոկրատների, ավտոկրատ կառավարությունների դեմ, թե արդյոք ժողովրդավարությունները կարող են պայքարել նրանց դեմ արագ զարգացող 21-րդ դարում»: Ակնհայտ է դառնում, որ ժողովրդավարական չափանիշները դառնալու են նախագծի հիմնաքարը: Նախագծի գաղափարը նախագահը հետևյալ կերպ է ներկայացնում. «ճնշելով ճնշողների ամբողջ ներուժը՝ մենք կփորձենք փոխել իրադրությունը»:[22]

ԱՄՆ նախագահի Ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջեյք Սալիվանը «B3W» նախագիծը բնութագրել է

[21] Background Press Call by Senior Administration Officials Previewing the Second Day of the G7 Summit, June 12, 2021, https://www.whitehouse.gov/briefing-room/press-briefings/2021/06/12/background-press-call-by-senior-administration-officials-previewing-the-second-day-of-the-g7-summit/, (13.09.2021).

[22] Remarks by President Biden in Press Conference, June 13, 2021, https://www.whitehouse.gov/briefing-room/speeches-remarks/2021/06/13/remarks-by-president-biden-in-press-conference-2/, (13.09.2021).

որպես «աշխարհի ժողովրդավար համախոհ երկրների միջև մերձեցում... որը կդառնա «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության բարձր չափանիշներով, թափանցիկ, կլիմայի նկատմամբ անվտանգ այլընտրանքը»:[23]

Հիմնվելով հասանելի տեղեկատվության վրա, կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական տարբերությունները «B3W» ու «BRI» նախագծերի միջև:

«BRI»-ի նախագծերի 59%-ը պատկանում են պետական մարմիններին, մինչդեռ մասնավոր հատվածը կազմում է ընդամենը 26%-ը: Մնացյալ մասը ներառում է հանրային-մասնավոր ձեռնարկությունները: Ֆինանսավորման հիմնական միջոցը բանկային վարկերն են տրված պետական և մասնավոր կառույցների միջոցով: Այդուհանդերձ, այս վարկերի պատճառով զարգացող երկրները կուտակել են մեծ պարտքեր և չեն կարողանում ետ վճարել: Այս իրավիճակը Վաշինգտոնը որակել է որպես «պարտքերի թակարդ»:[24]

Ի հակադրություն, թեև «B3W» նախագիծը ներառելու է ինչպես հանրային այնպես էլ մասնավոր կապիտալ, ներառյալ ԱՄՆ պետական կառույցները, նախագծի հիմնական առանցքը լինելու է մասնավոր կապիտալի ներգրավումը: Շրջանառվող գումարը կազմում է զարգացող երկրներում մինչ 2035թ. 40+ տրիլիոն ենթակառուցվածքների բացը: Այդուհանդերձ, ինչպես նշել է ԱՄՆ նախագահի Ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջեյք Սալիվանը, ԱՄՆ-ը և իր «Մեծ յոթնյակի» գործընկերները չեն պատրաստվում ձևացնել, թե լրացնելու են այդ ողջ բացը, բայց

[23] On-the-Record Press Call by National Security Advisor Jake Sullivan on the President's Trip to Europe, June 17, 2021, https://www.whitehouse.gov/briefing-room/press-briefings/2021/06/17/on-the-record-press-call-by-national-security-advisor-jake-sullivan-on-the-presidents-trip-to-europe/, (13.09.2021).

[24] **Lee A.,** Belt and Road Initiative debt: how big is it and what's next? *South China Morning Post*, July 19, 2021, https://www.scmp.com/economy/china-economy/article/3093218/belt-and-road-initiative-debt-how-big-it-and-whats-next, (13.09.2021).

պատրաստվում են «փորձել և իրական ներդրում ունենալ մոտակա15 տարիների ընթացքում»:[25]

Մեկ այլ տարբերությունն այն է, որ «B3W»-ն արժեքների վրա հիմնված նախագիծ է, և այդ իսկ պատճառով նախագծի գլխավոր տարրերից է թափանցիկ ֆինանսավորման աղբյուրները: Համարվում է, որ չինական կողմն այդքան էլ թափանցիկ չէ: Այսպիսով, երբ Չինաստանը բանակցում է վարկային պայմանագրի շուրջ, այն միտումնավոր գաղտնի է պահում պայմանագրի պայմանները: Այդպիսի օրինակ է Քենիայի դեպքը, երբ ակտիվիստները դատի էին տվել Քենիայի կառավարությանը, որպեսզի վերջինս ներկայացնի վարկային պայմանագրի մանրամասները, որի միջոցով ֆինասնավորվել է Մոմբասայից Նայրոբի երկաթգիծը:[26] Այսպիսով, «B3W»-ն նպատակ ունի հաղթահարել այս խնդիրը՝ առաջարկելով թափանցիկ և բաց ներդրումային քաղաքականություն:

Մեկ այլ տարբերություն այս երկու նախագծերի միջև քաղաքական նախապայմանն է, որն առաջ է քաշվում «B3W»-ի պարագայում: Նախագծի նպատակներից մեկն է ցույց տալ, որ «ժողովրդավարություններն ու բաց հասարակությունները կարող են համախմբվել և առաջարկել դրական ընտրություն՝ դիմագրավելու մեր ժամանակի մեծագույն մարտահրավերներին»:[27] Ընդհանուր առմամբ, մեծ շեշտադրում կա ժողովրդավարության վրա, և դա դիտարկվում է որպես նախապայման՝ նախագծին միանալու համար: Ի հակադրություն, չինական «BRI»-ի պարագայում չկա նման

[25] Press Gaggle by Press Secretary Jen Psaki and National Security Advisor Jake Sullivan En Route Brussels, Belgium, June 13, 2021, https://www.whitehouse.gov/briefing-room/press-briefings/2021/06/13/press-gaggle-by-press-secretary-jen-psaki-and-national-security-advisor-jake-sullivan-en-route-brussels-belgium/, (13.09.2021).

[26] B3W vs BRI: Can U.S. outdo China in Africa with infrastructure initiative? *Arirang News*, June 29, 2021, https://www.youtube.com/watch?v=xLCIZY_er1w, (14.09.2021).

[27] Background Press Call by Senior Administration Officials Previewing the Second Day of the G7 Summit, նշվ. աշխ.

նախապայման, երբ պետք է ընտրել ժողովրդավարություն բռնապետական երկրի փոխարեն կամ հակառակը:

«B3W» նախագիծը շեշտադրում է կլիմայի հետ կապված խնդիրները որպես հիմնական ոլորտներից մեկը և ներառում է այն սկզբունքը, որ պետք է իրականացնել կլիմային չվնասող ներդրումներ, որոնք համահունչ կլինեն Փարիզի կլիմայական համաձայնագրում սահմանված նպատակներին: Կլիմայի հարցը շատ կարևոր դեր ունի Բայդենի վարչակազմի համար, ով միացել էր Փարիզի կլիմայական համաձայնագրին այն բանից հետո, երբ Թրամփը դուրս էր եկել պայմանագրից: Բացի այդ, Բայդենը նշանակել է քաղաքական ծանրքաշային և նախկին պետքարտուղար Ջոն Քերիին, որպես Կլիմայական հարցերով նախագահի հատուկ դեսպան, որն ընդգծում է այս հարցի կարևորությունը Բայդենի և նրա վարչակազմի համար: Նման մոտեցումը էապես տարբերակում է «B3W»-ն «BRI»-ից, քանզի Չինաստանը նման նախապայման առաջ չի քաշում:

Իհարկե, խոսելով «B3W» նախագծի մասին, անհրաժեշտ է խոսել նաև այն մարտահրավերների և խոչընդոտների մասին, որոնց հետ նախագիծը կարող է բախվել:

«B3W» նախագծի համար լուրջ խոչընդոտ կարող է լինել «Մեծ յոթնյակի» գործընկերների շրջանում Չինաստանի նկատմամբ միատեսակ քաղաքականության բացակայությունը: Մինչ ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Կանադան և Ֆրանսիան հակաչինական դիրքորոշում են որդեգրել, Իտալիան և Գերմանիան ցանկանում են շարունակել «համագործակցային հարաբերություններ» Պեկինի հետ: Մյուս կողմից, Ճապոնիայի կառավարության դիրքորոշումը Չինաստանի նկատմամբ էլ ավելի անորոշ է:[28] Հաշվի առնելով «BRI»-ի նկատմամբ «B3W»-ի մրցակցային բնույթը՝ «Մեծ յոթնյակի» երկրների համար դժվար կլինի լիովին մրցակցային քաղաքականություն իրականացնել Չինաստանի նկատմամբ: Գերմանիայի արդյունաբերողների դաշինքը 2019թ. հունվարին և երկու ամիս անց նաև Եվրոպական հանձնաժողովը

[28] **Foon H.,** Could G7's B3W rival China's BRI? *Phnom Penh Post*, June 27, 2021, https://m.phnompenhpost.com/opinion/could-g7s-b3w-rival-chinas-bri, (14.09.2021).

Չինաստանին որակեցին որպես «համակարգային մրցակից»[29], այդուհանդերձ, Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի խոսքերով, Պեկինը կարևոր գործընկեր է այնպիսի հարցերում, ինչպիսիք են կլիմայի պաշտպանությունը: Այս տարի կայացած «Մեծ յոթնյակի» հանդիպման ժամանակ վերջինս նշել է, որ «...կլիմայի պաշտպանության և կենսաբազմազանության հարցերում առանց Չինաստանի մենք երբեք չենք կարողանա գտնել լուծումներ»:[30] Բացի այդ Գերմանիան Չինաստանը դիտարկում է, որպես կարևոր շուկա իր բարձր տեխնոլոգիական արտադրանքի և ավտոմեքենաների համար: Այսպիսով, հնարավոր է, որ Գերմանիան չցանկանա չափազանց մեծ խանդավառությամբ աջակցել «B3W»-ին, որպեսզի չհակադրվի Պեկինին:[31] Թեև Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը դեմ է բլոկեր կազմելուն, նա խորապես հավատացած է, որ Չինաստանի հետ գործ ունենալիս պետք է ունենալ ամուր և միասնական Եվրոպա: Այս առումով, նրա համար անհանգստացնող են Չինաստանի փորձերը՝ բաժանելու ԵՄ-ն երկկողմանի և տարածաշրջանային նախաձեռնությունների միջոցով, ինչպիսին է օրինակ «17+1» ձևաչափը: Մերկելը նաև անհանգստացած է չինական «BRI» նախագծով և Գերմանիայի համար կարևոր նշանակություն ունեցող տարածաշրջաններում, օրինակ Արևմտյան Բալկաններում, վերջինիս աճող ազդեցությամբ:[32]

Հաշվի առնելով, որ ԵՄ-ն Չինաստանի հետ ստորագրել է ներդրումային համաձայնագիր, և «Մեծ յոթնյակի» անդամ Իտալիան

---

[29] **Barkin N.,** Germany's Strategic Gray Zone with China, *Carnegie Endowment for International Peace*, March 25, 2020, https://carnegieendowment.org/2020/03/25/germany-s-strategic-gray-zone-with-china-pub-81360, (14.09.2021).

[30] **Bashir N., Schmidt N.,** Germany's Merkel "very happy" to meet with Biden, says G7 will send "strong" message on multilateralism, *CNN*, June 11, 2021, https://edition.cnn.com/world/live-news/biden-g7-summit-updates-intl-06-11-2021/h_560eabfef30643eb4a6cc4e4cf9039bf, (14.09.2021).

[31] **Kamat D.,** Biden's B3W proposal won't be a serious threat to China, *Arab News*, June 14, 2021, https://arab.news/zmqz6, (14.09.2021).

[32] **Brattberg E.,** Merkel's Mixed Legacy on China, 30 September, 2021, Carnegie Endowment for International Peace, https://carnegieendowment.org/2021/09/30/merkel-s-mixed-legacy-on-china-pub-85471, (18.10.2021).

«BRI»-ի մասնակից է, «B3W»-ի և «BRI»-ի կամ/կամ ձևաչափը դժվար թե իրականություն դառնա՝ ի հակադրություն որոշ կանխատեսումների:[33]

Մեկ այլ լուրջ խոչընդոտ է այն, թե արդյոք «Մեծ յոթնյակի» երկրները կկարողանան անհրաժեշտ գումար հավաքել, մանավանդ, երբ այդ չափի գումարը ավելին է, քան 2020թ. յոթ երկրների ՀՆԱ-ն միասին վերցրած: Բացի այդ, ԱՄՆ-ը ռեկորդային մեծ պարտքեր ունի, իսկ վերջին 50 տարվա ընթացքում Մեծ Բրիտանիայի ֆինանսական դեֆիցիտը ռեկորդային բարձր մակարդակի է հասել. հաջորդ տարի նրա ազգային պարտքը կհասնի ՀՆԱ-ի 93,8 տոկոսին:[34] Ավելին, այդ նույն երկրները, որոնք առաջարկում են մասնավոր կապիտալ մոբիլիզացնել միջին և ցածր եկամուտ ունեցող երկրներում գտնվող ենթակառուցվածքների համար, դեռ հաճախ ձգտում են ներգրավել չինական կապիտալ՝ իրենց ենթակառուցվածքները արդիականացնելու կամ նորերը զարգացնելու համար:[35] Դեռ ավելին, ենթակառուցվածքային նախագիծը եկամտի համար ավելի շատ ժամանակ կպահանջի, ինչը կարող է նշանակալի գործոն հանդիսանալ մասնավոր կապիտալը մոբիլիզացնելիս: Ներդրողները պետք է տեսնեն, թե ինչպիսին կլինի շուկայական եկամտաբերությունը կամ ստանան լրացուցիչ խթաններ:[36]

Մեկ այլ մարտահրավեր վերաբերում է ԵՄ-ի կողմից վերջերս առաջ քաշված ծրագրին, որի նպատակը ևս հակակշռելն է չինական «BRI» նախագծին: Սեպտեմբերի 15-ին Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լեյեն հայտարարեց «Global Gateway» նախագծի մասին, որը նույնպես ենթադրում է ներդրումներ

---

[33] **Yusuf H.,** B3W vs BRI, *DAWN*, June 28, 2021, https://www.dawn.com/news/1631926, (14.09.2021).

[34] **Song L.,** G7 infrastructure plan can hardly rival BRI, *Global Times*, June 14, 2021, https://www.globaltimes.cn/page/202106/1226107.shtml, (14.09.2021).

[35] **Ghiretti F.,** B3W: Building an Alternative to the BRI or Falling into the Same Trap? *The Diplomat*, June 22, 2021, https://thediplomat.com/2021/06/b3w-building-an-alternative-to-the-bri-or-falling-into-the-same-trap/, (14.09.2021).

[36] What Is The 'Build Back Better World' Partnership and How Is It Different from The Belt and Road Initiative? *Silk Road Briefing*, June 13, 2021, https://www.silkroadbriefing.com/news/2021/06/13/what-is-the-build-back-better-world-partnership-and-how-is-it-different-from-the-belt-and-road-initiative/, (14.09.2021).

հիմնված արժեքների վրա՝ առաջարկելով թափանցիկություն և լավ կառավարում: Նախագծի առաջնահերթությունների թվում է լինելու Աֆրիկան, ինչը և կքննարկվի փետրվարին կայանալիք ԵՄ-Աֆրիկա գագաթնաժողովին: Ֆոն դեր Լեյենը նաև իր ելույթում անդրադարձավ Չինաստանին նշելով, որ ԵՄ-ն ցանկանում է ստեղծել կապեր, այլ ոչ կախյալ երկրներ: Ըստ Ֆոն դեր Լեյենի ներդրումների հարցում ԵՄ-ն պետք է առավել խելացի գտնվի, քանզի «Եվրոպայի համար իմաստ չկա կառուցել հիանալի ճանապարհ Չինաստանին պատկանող պղնձահանքի և Չինաստանին պատկանող նավահանգստի միջև»:[37] Ինչպես ԱՄՆ, այնպես էլ ԵՄ ծրագրերը նախատեսվում են մեկնարկել 2022թ.-ի սկզբին: Այստեղ մարտահրավերը կայանում է նրանում, թե արդյոք Արևմտյան դաշնակիցների այս երկու նախագծերը կլինեն կոորդինացված և արդյոք կկարողանան դառնալ չինական նախագծի իրական այլընտրանք: Այս հարցը հատկապես կարևոր է հաշվի առնելով, որ ԱՄՆ-ԵՄ հարաբերությունները բավական լարված էին Թրամփի օրոք, ինչը չի նվազել նաև Բայդենի օրոք:[38]

Եվ ի վերջո Չինաստանն արդեն իսկ ստորագրել է համագործակցության պայմանագրեր 140 երկրների և 31 միջազգային կազմակերպությունների հետ «BRI» նախագծի շրջանակներում, մինչդեռ «B3W»-ն նորաստեղծ նախաձեռնություն է և որոշ ժամանակ կպահանջվի, որ այն սկսի իր գործունեությունը և ներգրավի այդքան մեծ թվով երկրներ և կազմակերպություններ:[39]

---

[37] **Ursula von der Leyen**, 2021 State of the Union Address by President von der Leyen, September 15, 2021, https://ec.europa.eu/commission/presscorner/detail/ov/SPEECH_21_4701, (09.10.2021).

[38] Johnson K., Belt and Road Meets Build Back Better, *Foreign Policy*, October 4 2021, https://foreignpolicy.com/2021/10/04/belt-and-road-initiative-bri-build-back-better-us-china-competition-west/, (09.10.2021).

[39] Song L., նշվ. աշխ.

Աֆղանստանից ամերիկյան զորքի դուրսբերումը և տարածաշրջանի ապակայունացման ազդեցությունը չինական «BRI» նախագծի վրա

Ամերիկյան զորքի դուրսբերումը Աֆղանստանից լուրջ ազդեցություն է ունենալու տարածաշրջանի անվտանգության վրա։ Չինաստանն արդեն իսկ այդ քայլը որակել է որպես «Աֆղանստանում Միացյալ Նահանգների քաղաքականության ձախողման վառ դրսևորում»։[40] Մասնավորապես Աֆղանստանում ԱՄՆ ներգրավվածությունը նկարագրվում է, որպես այդ երկրում «ավերածությունների» պատճառ, որը «լուրջ վնասներ է հասցրել Աֆղանստանի ժողովրդին ներխուժման առաջին իսկ օրվանից մինչև իր դուրսբերման վերջին րոպեն»։ Իսկ վերջին տասնամյակների ընթացքում Միացյալ Նահանգների կողմից Աֆղանստանում իրականացված գործողությունների հետևանքները դիտարկվում են որպես «անիմաստ ռազմական միջամտության հետևանքների և ուրիշներին սեփական գաղափարախոսությունն ու արժեքները պարտադրելու փորձերի» դասագրքային օրինակ։[41]

ԱՄՆ-ի հասցեին ուղղված քննադատություններին և զորքերի դուրսբերման գործընթացին զուգահեռ լուրջ ակտիվություն էր նկատվում Չինաստանի պաշտոնական շփումներում Աֆղանստանի իշխանությունների՝ թալիբների նկատմամբ, որոնք ահաբեկչական կազմակերպություն են որակվել ՄԱԿ ԱԽ-ի կողմից դեռ երկու տասնամյակ առաջ։

Աֆղանստանից ԱՄՆ զորքերի դուրսբերմանը և երկրում «Թալիբանի» վերահսկողության հաստատմանը զուգահեռ

---

[40] Wang Yi Meets with Head of the Afghan Taliban Political Commission Mullah Abdul Ghani Baradar, July 28, 2021, https://www.fmprc.gov.cn/mfa_eng/wjdt_665385/wshd_665389/t1895950.shtml, (15.09.2021).

[41] Foreign Ministry Spokesperson Wang Wenbin's Regular Press Conference on September 8, 2021, Ahttps://www.fmprc.gov.cn/mfa_eng/xwfw_665399/s2510_665401/2511_665403/t1905597.shtml, (28.09.2021).

Չինաստանը լուրջ ջանքեր է գործադրում «Թալիբանի» հետ լավ հարաբերություններ հաստատելու ուղղությամբ: Նույնիսկ մինչ «Թալիբանի» կողմից Աֆղանստանի նկատմամբ վերահսկողության հաստատումը Չինաստանը խմբավորման ներկայացուցիչներին հուլիս ամսին հրավիրել էր բանակցությունների՝ առաջարկելով Աֆղանստանին տնտեսական աջակցություն միաժամանակ շեշտելով, որ երկիրը չպետք է դառնա ահաբեկչության թատերաբեմ:[42] Հանդիպումը կայացել էր 2021թ. հուլիսի 28-ին Չինաստանի արտգործնախարար Վան Յինի և «Թալիբան»-ի համահիմնադիր և քաղաքական թևի ղեկավար Մուլլահ Աբդուլ Ղանի Բարադարի գլխավորած պատվիրակության միջև:[43] Աֆղանստանում «Թալիբանի» նոր ձևավորած կառավարությունը ևս պատրաստակամություն է հայտնել Չինաստանի հետ հարաբերություններ հաստատել: Մասնավորապես, «Թալիբանի» խոսնակ Զաբիհուլահ Մուջահիդը իտալական «La Repubblica» թերթին տրված իր հարցազրույցում նշել է. «Չինաստանը մեր ամենից կարևոր գործընկերն է և ներկայացնում է մեզ մի հիմնարար և բացառիկ հնարավորություն, քանի որ այն պատրաստ է ներդնել և վերակառուցել մեր երկիրը… երկրում առկա հարուստ պղնձահանքերը կարող են վերագործարկվել և նորացվել: Դեռ ավելին, Չինաստանը մեր անցաթուղթն է համաշխարհային շուկաներ մուտք գործելու համար»:[44]

Հարկ է նշել, որ Չինաստանն արդեն իսկ խոստացել է տրամադրել 200 միլիոն յուանի օգնություն (համապատասխանաբար 31 միլիոն ԱՄՆ դոլար), որը ներառելու է սննդի մատակարարումներ և կորոնավիրուսի պատվաստանյութեր:

[42] China offers $31m in emergency aid to Afghanistan, *BBC*, September 9, 2021, https://www.bbc.com/news/world-asia-china-58496867, (27.09.2021).

[43] Wang Yi Meets with Head of the Afghan Taliban Political Commission Mullah Abdul Ghani Baradar, July 28, 2021, https://www.fmprc.gov.cn/mfa_eng/wjdt_665385/wshd_665389/t1895950.shtml, (15.09.2021).

[44] Afghanistan: Taliban to rely on Chinese funds, spokesperson says, *Aljazeera*, September 3, 2021, https://www.aljazeera.com/news/2021/9/2/afghanistan-taliban-to-rely-on-chinese-money-spokesperson-says, (27.09.2021).

Օգնության տրամադրման մասին հայտնել էր Չինաստանի արտգործնախարար Վան Յին Աֆղանստանի հարևան երկրների՝ Պակիստանի, Իրանի, Տաջիկստանի, Ուզբեկստանի և Թուրքմենստանի ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում և կոչ արել այս երկրներին նույնպես համագործակցել՝ օգնելու Աֆղանստանին։[45]

Աֆղանստանում նախկին իշխանությունների տապալումից հետո որոշ շրջանակներում կա պատկերացում, որ Չինաստան-Աֆղանստան տնտեսական հարաբերությունները կխորանան «Թալիբանի» ղեկավարության օրոք, մասնավորապես՝ «BRI» նախաձեռնության շրջանակներում։ Պատահական չէ, որ Չինաստանի նախագահ Սի Ծինփինի գաղափարը հանդիսացող «BRI» նախաձեռնության ընդլայնման նպատակով հռետորական բնույթի գաղափարներ էին առաջ քաշվում Պեկինի կողմից՝ Չինաստան-Պակիստան տնտեսական միջանցքը ընդլայնելու և Աֆղանստանին ներգրավելու տեսանկյունից։ Չինաստանը այժմ նպատակ ունի 60 միլիարդ ԱՄՆ դոլար արժողությամբ Չինաստան-Պակիստան տնտեսական միջանցքը ընդլայնելու եռակողմ դիվանագիտական նախաձեռնության շրջանակներում՝ Աֆ-ղանստանի ներգրավմամբ։ Սակայն նախկինում այս նախագիծը զգալի առաջընթաց չի գրանցել՝ պայմանավորված Աֆղանստանի նախկին ղեկավար Աշրաֆ Ղանիի առաջնորդած կառավարության և Պակիստանի կառավարության (Իսլամաբադը աջակցում էր «Թալիբանին») քաղաքական դիրքորոշումների տարբերությամբ։ [46]

Նաև դրանով պայմանավորված քիչ տնտեսական ակտիվություն և ջանք է գործադրվել նախագիծը իրականություն դարձնելու ուղղությամբ։ Չինաստանը մի շարք սահմանային կետեր է վերանորոգել՝ հեշտացնելու Աֆղանստանի և Պակիստանի միջև

---

[45] China offers $31m in emergency aid to Afghanistan, նշվ. աշխ.

[46] China eyes Belt & Road extension in Taliban-ruled Afghanistan, raising concerns for India, *The Times of India,* September 3, 2021, https://timesofindia.indiatimes.com/world/south-asia/china-eyes-belt-road-extension-in-taliban-ruled-afghanistan-raising-concerns-for-india/articleshow/85900398.cms, (27.09.2021).

ապրանքների տեղափոխումը, սակայն դա Չինաստանի կողմից իրականացվող ծանրակշիռ տնտեսական ենթակառուցվածների նախագծերի թվին չի դասվում, որոնք իրականացվում են Պակիստանում կամ Հյուսիսային և Կենտրոնական Ասիայում:[47]

Կասկած չկա, որ Պեկինի ընկերությունների համար հետաքրքրություն են ներկայացնում Աֆղանստանի հարուստ ռեսուրսները: Չինաստանը բնական մետաղների արդյունահանման ոլորտում առաջատար երկիր է, իսկ Աֆղանստանում են գտնվում մետաղի ամենամեծ հանքավայրերից մի քանիսը: Ըստ աֆղանական նախկին կառավարության հաշվարկների 2020թ. այդ ռեսուրսները կազմել են 1-3 տրիլիոն ԱՄՆ դոլար:[48]

Սակայն դժվար է պնդել, որ սա ռազմավարական առաջնահերթություն է Պեկինի համար: Մինչ այժմ Չինաստանը զարմանալիորեն քիչ տնտեսական դեր է խաղացել Աֆղանստանում և դժվար թե պատկերը կտրուկ փոխվի մոտ ապագայում: Հանքարդյունաբերության ոլորտում Չինաստան-Աֆղանստան համագործակցությունն ունի ձախողված պատմություն: Դեռ 2007թ. Չինաստանի մետալուրգիական կորպորացիան և Ծիանսի կորպորացիան պայմանագիր ստորագրեցին Աֆղանստանի կառավարության հետ, որով 30 տարի ժամկետով վարձակալության տրվեց Մես Այնակ պղնձահանքը, իսկ 2011թ.-ին Չինաստանի էներգետիկ ոլորտի հսկա՝ Չինաստանի ազգային նավթային կորպորացիան, հաղթեց Ամուդարյայի նավթային հանքահորի զարգացման համար տենդերում: Սակայն այս երկու նախագծերն էլ բախվեցին փակուղու և չիրականացվեցին:[49]

Ներկայումս «BRI»-ի շրջանակներում համագործակցությունն Աֆղանստանի հետ վերաբերում է Չինաստան-Պակիստան տնտեսական միջանցքին և մասնավորապես դրա մաս

[47] **Pantucci R.,** The myth of Chinese investment in Afghanistan, *Nikkei Asia*, August 16, 2021, https://asia.nikkei.com/Opinion/The-myth-of-Chinese-investment-in-Afghanistan2, (15.09.2021).

[48] China eyes Belt & Road extension in Taliban-ruled Afghanistan, raising concerns for India, նշվ. աշխ.

[49] **Pantucci R.,** նշվ. աշխ.

կազմող Գվադար նավահանգստին: Հարավային Պակիստանում Չինաստանը զարգացնում է Գվադարի նավահանգիստը, որը դառնալու է խոշոր էներգետիկ հաբ: Այդուհանդերձ, եկամտաբեր լինելու համար, նոր նավահանգիստը պետք է ծառայի որպես տերմինալ Կենտրոնական Ասիայից եկող բնական գազի համար: Սակայն գազատարներով կամ ճանապարհներով փոխադրումներ չեն կարող պլանավորվել պատերազմի արդյունքում պառակտված երկրում: Աֆղանստանում խաղաղության հաստատման պարագայում, Չինաստանն ու Աֆղանստանը կարող են դիտարկել նոր ենթակառուցվածքների կառուցումը, որոնք կկապեն Գվադարի նավահանգիստը Կենտրոնական Ասիայի հետ: Այս ցանցերի կառուցման պարագայում Գվադարը նույնպես կդառնա շատ ավելի գրավիչ օտարերկրյա ներդրողների համար, հատկապես Պարսից ծոցի տարածաշրջանից, քանզի վերջիններս մինչ այժմ մեծ պատրաստակամություն չեն ցուցաբերել ներդրումներ իրա-կանացնելու հարցում պայմանավորված հեռանկարների անորո-շությամբ:[50]

Միացյալ Նահանգների կողմից զորքերի դուրսբերումը չինական «BRI» նախագծի և դրանում Աֆղանստանի ներգրավվածության համար առաջ է բերել որոշակի ռիսկեր: Գլխավոր ռիսկն անվտանգայինն է, որը պայմանավորված է ահաբեկիչների՝ Չինաստան և Կենտրոնական Ասիա հնարավոր ներթափանցմամբ, որը կարող է հանգեցնել տարածաշրջանի ապակայունացմանը: Այս ռիսկի մասին Չինաստանը պարբերաբար բարձրաձայնում է և հերթական անգամ դրա մասին խոսեց Չինաստանի արտգործնախարար Վանգ Յին՝ Մուլլահ Աբդուլ Ղանի Բարադարի հետ հանդիպման ժամանակ մասնավորապես նշելով, որ Արևելյան Թուրքեստանի իսլամական շարժումը (ԱԹԻՇ), որը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից որակվել է որպես միջազգային ահաբեկչական կազմակերպություն, «ուղիղ

[50] **Goulard S.,** Does the Belt and Road Have a Future in Taliban-ruled Afghanistan? *The Diplomat*, August 21, 2021, https://thediplomat.com/2021/08/does-the-belt-and-road-have-a-future-in-taliban-ruled-afghanistan/, (27.09.2021).

սպառնալիք է Չինաստանի ազգային անվտանգության և տարածքային ամբողջականության համար»: Արտգործնախարարը նաև հույս է հայտնել, որ աֆղանական «Թալիբանը» կապերը կխզի ահաբեկչական կազմակերպությունների հետ, այդ թվում ԱԹԻՇ-ի և «կստեղծի անվտանգության, կայունության, զարգացման և գործընկերության պայմաններ տարածաշրջանում»:[51]

Չինական «BRI» նախագծում Աֆղանստանի ներգրավման և այդ երկրում Չինաստանի կողմից ներդրումներ կատարելու անվտանգային ռիսկի տեսանկյունից կա տարածված երկու տեսակետ:

Առաջին տեսակետի համաձայն «BRI» նախաձեռնության ներդրումների համար Աֆղանստանի առաջնահերթությունը կարող է նաև օգնել Չինաստանին լուծել որոշակի ռիսկեր: Մասնավորապես, տնտեսական կապերի զարգացումը և ակտիվացումը կարող են կանխել Չինաստանի դեմ հնարավոր հարձակումները, ինչպես նաև անկայունության տարածումը Պակիստան և Կենտրոնական Ասիա, որով կապահովվի նաև «BRI»-ի անվտանգությունը:[52]

Ըստ երկրորդ՝ առավել գերակշռող տեսակետի, չնայած Աֆղանստանին աջակցություն ցուցաբերելու Չինաստանի պատրաստակամությանը՝ երկրի անվտանգության վատթարացող վիճակը Չինաստանին Աֆղանստանում զգալի գումարների ներդրումներ կատարելուց հետ պահող գործոն կլինի՝ պայմանավորված Աֆղանստանում չինական ներդրումները պաշտպանելու Չինաստանի մտահոգությամբ: Չինաստանի այս անհանգստությունն արդարացված է հաշվի առնելով վերջերս մահապարտ ահաբեկչի կողմից Գվադարի նավահանգստում աշխատող չինացի ինժեներների թիրախավորումը: Պակիստանում

[51] Wang Yi Meets with Head of the Afghan Taliban Political Commission Mullah Abdul Ghani Baradar, նշվ. աշխ.

[52] **Sacks D.,** Why Major Belt and Road Investments Are Not Coming to Afghanistan, *Council on Foreign Relations*, August 24, 2021, https://www.cfr.org/blog/winning-public-diplomacy-battle-south-china-sea, (15.09.2021).

չինացի աշխատողների նկատմամբ հարձակումների շղթայի վերջին դեպքը տեղի է ունեցել Աֆղանստանում, որտեղ բանվորներին հյուսիսային Պակիստան տանող ավտոբուսը հուլիսին հարձակման ենթարկվեց մահապարտ ահաբեկչի կողմից, որի հետևանքով սպանվեցին ազգությամբ 9 չինացիներ:[53] Ավելի ուշ Պակիստանը հայտնեց, որ Պակիստանի Թալիբանի կողմից իրականացված այս ահաբեկչական ակտում ներգրավված էին Հնդկաստանի և Աֆղանստանի հետախուզական գործակալությունները:[54]

Եթե Չինաստանն ի վիճակի չէ Պակիստանում իր նախագծերի անվտանգությունն ապահովելու, որտեղ կառավարությունն աջակցում է «BRI» նախաձեռնությանը և Չինաստանն էլ ունի մեծ ազդեցություն, ապա դա էլ ավելի բարդ կլինի իրականացնել Աֆղանստանում: Չինաստանն օգտվում էր Աֆղանստանում ԱՄՆ զորքերի ապահոված անվտանգությունից և հիմա, երբ Միացյալ Նահանգները դուրս է եկել, Չինաստանից զգալի ռեսուրսների տրամադրում կպահանջվի, որպեսզի ապահովի իր ապագա նախագծերի անվտանգությունը:[55]

Անվտանգային ռիսկի այս տեսակետի առումով հատկանշական է, որ Չինաստանը վտանգում է իր ներկայությամբ բարկացնել տեղի աֆղաններին: Պեկինը հասկանում է Աֆղանստանի ցեղային իրականությունը, և որ թալիբներն ունեն բազմաթիվ ենթախմբեր, որոնց թույլ է տրված գործել քվազի-ինքնավարությամբ շատ ոլորտներում: Չնայած «Թալիբանը» ընդունել է Չինաստանի դիվանագիտական առաջարկությունները և ուրախությամբ ողջունել ներդրումների հեռանկարը, դեռ ավելին Չինաստանին տվել է ներդրումների անվտանգության երաշխիքներ, այնուամենայնիվ 40 միլիոն ժողովուրդ ունեցող երկրում

[53] Նույն տեղում:
[54] **Goulard S.,** նշվ. աշխ.
[55] **Sacks D.,** նշվ. աշխ

խմբավորումը չունի վերահսկողություն այլ ցեղերի և կռվողների նկատմամբ:[56]

Անվտանգային ռիսկից զատ առկա են նաև տնտեսական ռիսկեր: Թալիբանը շարունակում է գտնվել պատժամիջոցների տակ ԱՄՆ-ի, ԵՄ-ի և ՄԱԿ-ի կողմից, ինչն ակնհայտ իրավական և ֆինանսական ռիսկեր է պարունակում նրանց համար, ովքեր գործարքների մեջ կմտնեն խմբավորման հետ: Նույնիսկ եթե Չինաստանը ճանաչի «Թալիբանին», արևմտյան պատժամիջոցների ազդեցության տակ շատ քիչ բանկեր կամ ֆինանսական ինստիտուտներ գործարքներ կիրականացնեն «Թալիբանի» կառավարության հետ, քանի դեռ այդ պատժամիջոցները ուժի մեջ են:[57]

Արդյո՞ք Հայաստանը կարող է մասնակցել «B3W» նախագծին

Վերջին տարիներին Հայաստանում լայն սպառման ապրանքների գների թանկացումը, կորոնավիրուսը, Ադրբեջանի և Թուրքիայի կողմից սանձազերծված պատերազմը, ինչպես նաև ընդհանուր տնտեսական ցուցանիշների անկումը Հայաստանին դրել են բավականին բարդ իրավիճակում:[58] Հայաստանն իր արտաքին պարտքը հասցրել է անկառավարելի շեմի, ինչը, ի թիվս այլ գործոնների դարձել է ներքաղաքական, սոցիալական և տնտեսական ճգնաժամերի հիմքերից մեկը:[59]

---

[56] **Turak, N.,** China's rumored ambitions to dive into Afghanistan are overstated and unrealistic, experts say , *CNBC*, September 9, 2021, https://www.cnbc.com/2021/09/09/chinas-rumored-aims-to-dive-into-afghanistan-are-exaggerated-experts.html, (27.09.2021).

[57] Նույն տեղում:

[58] ՀՀ տնտեսության սոցիալ-տնտեսական զարգացումները 2021 թվականի հունվար-հուլիս ամիսներին, «*Լույս» հիմնադրամ*, https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=244, (15.09.2021).

[59] Ամսական ամփոփ տեղեկագիր ՀՀ կառավարության պարտքը 2021 թվականի փետրվարի 28-ի դրությամբ, https://www.minfin.am/website/images/files/Monthly_Report_February_2021_am.pdf, (15.09.2021).

Հայաստանը կարծես ուշադրությամբ է հետևում «BRI» նախագծի իրականացման գործընթացներին, սակայն որևէ կերպ այդ գործընթացներում ներգրավված չէ: Հայաստանին անհրաժեշտ են ֆինանսական միջոցներ, արտաքին ներդրումներ, որոնք կարող են ինչ-որ չափով կարգավորել տնտեսական ծանր իրավիճակը: Հաշվի առնելով վերջին պատերազմում կրած պարտությունը, Հայաստանը դեռևս թշնամական հարաբերություններ ունի Ադրբեջանի և Թուրքիայի հետ, որոնք դեռևս փակ են պահում իրենց սահմանները Հայաստանի հետ՝ Հայաստանից պահանջելով իր տարածքով ցամաքային ճանապարհ տալ, որը Թուրքիան կկապի Ադրբեջանի հետ: Հայաստանը լուրջ կարիք ունի ներգրավելու օտարերկրյա ներդրումներ և վարկային միջոցներ: Սա նշանակում է, որ Հայաստանը կընդունի առաջին իսկ հասանելի վարկերը, դրամաշնորհներն ու ֆինանսական այլ միջոցներ, հատկապես եթե դրանք ցածր տոկոսադրույքներով են: Միևնույն ժամանակ, Հայաստանը շուտով ԵՄ-ից կստանա 2.6 միլիարդ եվրո ֆինանսական աջակցություն, ինչը Հայաստանի կողմից երբևէ ստացված ամենամեծ ֆինանսական օգնությունն է:[60] Պետք է նաև հաշվի առնել, որ առաջիկա տարիներին, ամենայն հավանականությամբ, ակնկալվում է, որ Հայաստանը աջակցություն կստանա ԱՄՆ-ից՝ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի և այլ կազմակերպությունների շրջանակներում: Հավանաբար, ԱՄՆ-ից Հայաստանին տրամադրվող արտաքին օգնությունը նույնպես մեծ թիվ կկազմի:[61] Սա նշանակում է լրացուցիչ ազդեցություն Հայաստանի վրա, քանի որ ֆինանսական այդպիսի հոսքերը կարող են լուրջ ազդեցություն ունենալ

[60] **Olivér Várhelyi**, Remarks by Commissioner Olivér Várhelyi at the press point with Acting Deputy Prime Minister Mher Grigoryan, July 9, 2021, https://ec.europa.eu/commission/commissioners/2019-2024/varhelyi/announcements/armenia-remarks-commissioner-oliver-varhelyi-press-point-acting-deputy-prime-minister-mher-grigoryan_en, (15.09.2021).

[61] Հայաստանում ԱՄՆ դեսպան Լին Թրեյսիի հարցազրույցը «Ազատություն» ռադիոկայանին, *«Ազատություն» ռադիոկայան*, 26 Ապրիլի, 2021թ., https://www.azatutyun.am/a/31223938.html, (15.09.2021).

տնտեսության զարգացման և աշխատատեղերի ստեղծման վրա: Ենթակառուցվածքների զարգացման հեռանկարը նույնպես կհետաքրքրի Հայաստանին: Օրինակ, խորհրդային տարիներին Հայաստանը հայտնի էր իր առողջարաններով, որոնց մեծ մասը ԽՍՀՄ փլուզումից հետո դադարեցին գործել: Խորհրդային տարիներին Հայաստանը նաև լուրջ տեխնոլոգիական բազա ուներ, որը հնարավոր ներդրումների դեպքում կարող է դառնալ տնտեսության առաջատար ճյուղ (օրինակ՝ Երևանի ֆիզիկայի ինստիտուտ, մաթեմատիկայի ինստիտուտ, աստղաֆիզիկայի ոլորտ և այլն): Հայաստանը լավագույն օրինակն է զարգացող երկրների շարքում, որը կարող է առաջնահերթ համարել արագ և էժան վարկերի, ներդրումների, դրամաշնորհների և այլ ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը: Սակայն այս ամենը չի ենթադրում հրաժարում չինական նախագծին մասնակցությունից: Հայաստանը պետք է հստակ հաշվարկներ ունենա, հասկանալու համար թե ինչպես այս նախագծերից երկուսի մեջ էլ ներգրավվածություն ունենա, այնպես էլ անհատական համագործակցություն իրականացնի:

Եզրակացություն

Հաշվի առնելով տեղակատվության սակավությունը և վերլուծելով հասանելի տեղեկությունները նոր նախագծի վերաբերյալ, կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին: ԱՄՆ-ի և «Մեծ յոթնյակի» մյուս երկրների կողմից հայտարարված «B3W» նախագիծը հավակնություն ունի դառնալու լրջագույն մարտահրավեր չինական «BRI» նախագծի համար: Համաշխարհային տնտեսական նախագծերի մրցակցության ոլորտում «Մեծ յոթնյակը» կոշտ դիմակայության է պատրաստվում Չինաստանի հետ: Ընդ որում «Մեծ յոթնյակը» նախատեսում է այս մրցապայքարում ներդնել իր ողջ ներուժը, քաղաքական ազդեցությունն ու կշիռը՝ փորձելով առավել կարճ ժամկետներում և

առավել մեծ ֆինանսական միջոցների ներդրմամբ զսպել չինական նախագծի իրագործման հեռանկարը:

Այս առումով կարելի է առանձնացնել մի քանի գործոններ, որոնք ի սկզբանե հաշվի են առնվել «B3W» նախագծի հեղինակների կողմից, առավել արդյունավետ և առավել գրավիչ հարթակ ստեղծելու փորձի համար: Մեծ հաշվով «B3W» նախագծի նպատակն է ստեղծել առավել նախընտրելի ֆինանսավորող մոդել զարգացող երկրների համար և մեկ քայլ առաջ անցնել չինական նախագծի իրագործումից: Հենց այս տրամաբանության ներքո է անհրաժեշտ դիտարկել ԱՄՆ-ում տարածվող այն տեսակետը, որ Չինաստանի կողմից ստացվող ներդրումներն ու վարկերը յուրահատուկ ծուղակ են ստացող պետությունների համար Չինաստանի ազդեցության տակ հայտնվելու առումով:[62]

Այս տեսանկյունից կարևոր գործոններ կան: Օրինակ ֆինանսական գործոնը: Ինչպես ցանկացած ներդրումային ծրագրի պարագայում, ներդրումների չափն ու ժամանակի գործոնը ունեն չափազանց կարևոր նշանակություն: Նախ պետք է նշել, որ «Մեծ յոթնյակի» նախագիծն ավելի շատ ֆինանսական միջոցների ներգրավում է նախատեսում: Եթե չինական նախագծով նախատեսվում է շուրջ 1+ տրիլիոն դոլարի պոտենցիալ ներդրում, ապա «Մեծ յոթնյակի» նախաձեռնությունը նախատեսում է շուրջ 40+ տրիլիոն դոլարի պոտենցիալ ներդրում: Դրանից զատ պետք է հաշվի առնել, որ ֆինասնական միջոցների հոսքը լինելու է թե՛ ամերիկյան պետական կորպորացիաների, («Development Finance Corporation», «USAID», «EXIM», «Millennium Challenge Corporation», «U.S. Trade and Development Agency») թե՛ մասնավոր հատվածի ներդրումների հաշվին: Սա նշանակում է պետություններ-մասնավոր համագործակցություն, ինչը սովորաբար ավելի է հեշտացնում ներդրումների իրականացումը, բարելավում է

[62] **Abi-Habib M., Bradsher K.,** Poor Countries Borrowed Billions from China. They Can't Pay It Back, *The New York Times*, May 18, 2020, https://www.nytimes.com/2020/05/18/business/china-loans-coronavirus-belt-road.html, (15.09.2021).

ներդրումային միջավայրը, նվազեցնում է ռիսկերը: Այսինքն, հասանելի ֆինանսական միջոցները կարող են իրենց մեջ ներառել ինչպես ամերիկյան խոշոր վարկային կազմակերպությունների կապիտալը, այնպես էլ եվրոպական, կանադական, ճապոնական և այլ պետությունների պետական և մասնավոր կազմակերպությունների կապիտալը: Չնայած այն հանգամանքին, որ դեռևս հստակ չէ, թե ինչ տեսակի ներդրումների մասին է գնալու խոսքը, ամենայն հավանականությամբ դրանք պետություններին տրամադրվող էժան վարկային միջոցներ կլինեն, որոնց միջոցով կֆինանսավորեն տարբեր տեսակի ենթակառուցվածքների կառուցումը կամ վերանորոգումը, որոնք կարող են ծառայել «B3W» նախագծի հիմնական ուղղություններին, այսինքն՝ կլիմա, առողջություն և առողջապահություն, թվային տեխնոլոգիաներ, գենդերային հավասարություն և հավասարություն: Այդ ենթակառուցվածքների թվին կարող են դասվել օրինակ զարգացող երկրներում գործած այնպիսի ենթակառուցվածքներ, ինչպիսիք են օրինակ առողջապահական հաստատություններն ու առողջա-բանները, բժշկական կենտրոններն ու բուժիմնարկները, առողջապահական գիտահետազոտական կենտրոնները, լաբորատորիաները, բնության համար ոչ վնասակար և այլ տեսակի գործարաններն ու կոմբինատները, սննդամթերքի ոլորտն ու էկո գյուղատնտեսական արտադրությունները, ինչպես նաև բիզնեսում կանանց ներգրավվածությունը խրախուսող ծրագրերը, բնա-պահպանական ծրագրերը, տրանսպորտային կոմունիկացիաները և այլն: Այսինքն, խոսելով զուտ ենթակառուցվածքների մասին, կարող ենք ի նկատի առնել օրինակ ԽՍՀՄ փլուզումից հետո չգործարկվող ենթակառուցվածքները, որոնք առանձին պե-տություններում ֆինանսական միջոցների բացակայության պատճառով բարոյապես մաշված են, սակայն կան դրանց վերածնունդն ապահովելու համար բոլոր նախադրյալներն ու ինտելեկտուալ կարողությունները:

Ամենայն հավանականությամբ «B3W» նախագծում առաջնահերթություն կտրվի այն երկրներին, որոնք «BRI» նախագծի

պոտենցիալ մասն էին կազմում: Սա հնարավորություն կտա այդ պետություններին առավել սեղմ ժամանակահատվածում ֆինանսական ներդրումներ ստանալ և հետագայում հրաժարվել չինական ներդրումներից և վարկային միջոցներից:

Հաջորդ գործոնը **ժամանակի գործոնն է:** Ժամանակի գործոնը ամենակարևոր գործոններից մեկն է, որը պետք է մշտապես հաշվի առնվի ցանկացած ներդրումային ծրագրում: Բացի ֆինանսական միջոցների առավել մեծ ծավալներից, «B3W» նախագիծը նախատեսվում է ավելի շուտ կյանքի կոչել: Եթե չինական նախագիծը նախնական հաշվարկներով պետք է ամբողջապես գործի 2049 թվականին, ապա «B3W» նախագիծը նախատեսում է ֆինանսական միջոցներ տրամադրել զարգացող պետություններին մինչև 2035 թվականը:[63] Ակնհայտ է, որ շահագրգիռ երկրների համար սա նույնպես կարող է կարևորագույն նշանակություն ունենալ: Առավել շուտ և առավել շատ ֆինանսական միջոցների ներգրավումը տնտեսության մեջ կարող է փրկօղակ լինել զարգացող երկրների համար, որոնցից շատերի ֆինանսատնտեսական վիճակը բավականին բարդ է, մանավանդ Կովիդ-19-ի համավարակի պայմաններում:

Աշխարհաքաղաքական բաղադրիչը հաջորդ կարևոր գործոններից է: Պետք է հաշվի առնել այն աշխարհաքաղաքական իրողությունները, որոնք կարող են խանգարել չինական նախագծի կյանքի կոչմանը: Մասնավորապես, անհրաժեշտ է հաշվի առնել, որ ԱՄՆ զորքի դուրսբերումն Աֆղանստանից լուրջ մարտահրավերներ է ստեղծելու Մերձավոր Արևելքի, ինչպես նաև Կենտրոնական Ասիայի երկրների համար, ինչը կարող է իր հերթին ազդել «BRI» նախագծի իրականացման ժամանակացույցի վրա, քանի որ չինական նախագծի համար Կենտրոնական Ասիան ունի կենսական նշանակություն: Չմոռանանք այն հանգամանքը, որ ԱՄՆ-ը գործարկել և արդյունավետ աշխատում է նաև «C5+1»

[63] Background Press Call by Senior Administration Officials Previewing the Second Day of the G7 Summit, նշվ. աշխ.

ձևաչափի շրջանակներում, որը Կենտրոնական Ասիայի 5 երկրների հետ քաղաքական հարաբերությունների խորացման հարթակ է, և ամերիկյան ազդեցության տարածման կարևոր բաղադրիչներից: Աֆղանստանում, Պակիստանում և Կենտրոնական Ասիայում ձևավորված բարդ քաղաքական իրողությունները, ինչպես նաև այդ երկրների միջև հնարավոր լարվածությունները կարող են լուրջ մարտահրավեր դառնալ չինական նախագծի իրագործման ժամանակացույցի տեսանկյունից:

Քաղաքական բաղադրիչը նույնպես կարևոր է: Բայդենի կողմից ԱՄՆ հետախուզությանը տրված հանձնարարականները պարզելու, թե արդյոք Կովիդ-19-ը ուներ լաբորատոր ծագում թե ոչ, կարելի է դիտարկել որպես Չինաստանի դեմ լրացուցիչ ճնշման փորձ, ինչը կարող է իր շուրջ համախմբել միջազգային հանրությանը:[64] Չնայած այն հանգամանքին որ հետախուզությունը դեռևս ապացույցներ չի ներկայացրել Կովիդ-19-ի լաբորատոր ծագման վերաբերյալ, այդուհանդերձ, կարելի է ենթադրել, որ Չինաստանի վրա ճնշումները կշարունակվեն այս ուղղությամբ: Նման ճնշման հարթակ էր նաև սեպտեմբերի 22-ին տեղի ունեցած Կովիդ-19-ին նվիրված հեռահար միջազգային գագաթնաժողովը:[65] Չնայած այն հանգամանքին, որ ի տարբերություն Թրամփի, Բայդենի վարչակազմը կորոնավիրուսին չի անվանում չինական վիրուս, սակայն հետախուզությանը տրված հանձնարարականի ամբողջ տրամաբանությունը նույն հարթության վրա է կարելի դիտարկել:

Առաջիկա տարիներին կարելի է կանխատեսել առավել մեծ ճնշումներ Չինաստանի վրա ԱՄՆ-ի և «Մեծ յոթնյակի» առանձին

---

[64] **Joe Biden**, Statement by President Joe Biden on the Investigation into the Origins of COVID-19, May 26, 2021, https://www.whitehouse.gov/briefing-room/statements-releases/2021/05/26/statement-by-president-joe-biden-on-the-investigation-into-the-origins-of-covid-19/, (15.09.2021).

[65] Global COVID-19 Summit: Ending the Pandemic and Building Back Better, September 24, 2021, https://www.whitehouse.gov/briefing-room/statements-releases/2021/09/24/global-covid-19-summit-ending-the-pandemic-and-building-back-better/, (23.09.2021).

պետությունների կողմից՝ կորոնավիրուսի տարածման (կամ դրա ծագման վերաբերյալ Չինաստանի ոչ թափանցիկ գործունեության տեսանկյունից), մարդու իրավունքների, կրոնական ազատության և փոքրամասնությունների իրավունքների թեմաներով: Այս ճնշումների նպատակն է լինելու Չինաստանի միջազգային հեղինակության անկումը, որն ավելի է հեշտացնելու «B3W» նախագծի առաջխաղացումը և չինական «BRI» նախագծի զսպումը:

Մեկ այլ կարևոր գործոն է **աշխարհագրական բաղադրիչը:** Հարկ է նշել, որ աշխարհագրական առումով նույնպես «B3W» նախագծով փորձ է արվելու առավել մեծ տարածքներ ներգրավվել, քան չինական «BRI» նախագծով: Ըստ պաշտոնական հաղորդագրության, աշխարհագրական առումով «B3W» նախագիծը սկիզբ է առնելու «Լատինական Ամերիկայից և Կարիբյան ծովից մինչև Աֆրիկա, Հնդկական և Խաղաղ օվկիանոս»:[66] Սա իհարկե չի նշանակում, որ «BRI» նախագիծը չի կարող ընդլայնվել Չինաստանից մինչև Լատինական Ամերիկա և Եվրոպա, սակայն ակնհայտ է, որ որոշ երկրներ (օրինակ Մեծ յոթնյակի որոշ անդամներ) խուսափելու են մասնակցել չինական նախագծի կյանքի կոչմանը, քանի որ նրանք արդեն իսկ ունեն իրենց այլընտրանքային նախագիծը: Սա իհարկե ազդելու է նախագծերի աշխարհագրության վրա: Այս առումով երկու նախագծերի նախաձեռնողները կատաղի պայքար են մղելու Կենտրոնական Ասիայի, Մերձավոր Արևելքի, Հարավային Կովկասի, «Երեք Ծովերի նախաձեռնության» անդամ երկրների, և այլ տարածաշրջաններում և պետություններում անվերապահ ազդեցության ձեռքբերման համար:

Ամերիկյան ներքաղաքական գործոնը նույնպես կարևոր է: Մինչ այժմ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում կամ Սենատում դեռևս չեն եղել լսումներ կամ լայնածավալ քննարկումներ այս հարցի շուրջ: Ըստ երկու պալատների ծրագրի՝ դեռևս «B3W»-ի

[66] FACT SHEET: President Biden and G7 Leaders Launch Build Back Better World (B3W) Partnership, նշվ. աշխ.

վերաբերյալ բանաձև օրակարգում չկա։ Հավանաբար նման քննարկումներ կնախատեսվեն մոտ ապագայում և կդառնան գործադիր և օրենսդիր իշխանությունների համագործակցություն այս նախագծի շրջանակներում։ Հաշվի առնելով ԱՄՆ-ում ընդհանուր քաղաքական իրավիճակը ամենայն հավանականությամբ շատ չեն լինի այն ներկայացուցիչները կամ սենատորները, ովքեր կհակառակվեն Չինաստանին հակակշռող նախագծին։ Ընդհանուր առմամբ, ԱՄՆ քաղաքական վերնախավում կոնսենսուս կա առ այն, որ ԱՄՆ-ը պետք է քայլեր ձեռնարկի՝ նվազեցնելու աշխարհում Չինաստանի ազդեցությունը։ Ահա թե ինչու, այս նախագծին լուրջ դիմադրություն չի լինի ամերիկյան Կոնգրեսում։ Միևնույն ժամանակ հնարավոր է, որ Կոնգրեսում գտնվեն մարդիկ, ովքեր կընդդիմանան նման հսկայածավալ ֆինանսական ռեսուրսներ ծախսելուն, բայց ոչ ինքնին ծրագրի իրագործմանը։

Իրավական տեսանկյունից «B3W» նախագծի իրականացումը կարող է հավանության արժանանալ Կոնգրեսի կամ նախագահական գործադիր հրամանագրի միջոցով։ Բայց հենց որ լինի որևէ բյուջետային ֆինանսական ռեսուրսների ներգրավման անհրաժեշտություն նախագծում, ապա Կոնգրեսի դերը ԱՄՆ բյուջեի կազմման առումով առանցքային է՝ համաձայն ԱՄՆ Սահմանադրության։ Ինչ վերաբերում է այս նախագծի իրականացմանը այլ երկրներում, ապա ծրագրի հիմնական իրականացնողները կարող են լինել օրինակ «USAID»-ը, «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիան և այլ գործակալություններ, որոնք արդեն իսկ ունեն հսկայածավալ փորձ, գիտելիք, ներուժ և ռեսուրսներ նման ծրագիր կյանքի կոչելու համար։ Բացառված չէ, որ ժամանակի ընթացքում նոր կազմակերպություններ կամ գործակալություններ կստեղծվեն առավել նեղ և հատուկ գործունեության ոլորտներում աշխատելու համար։

Կարևոր գործոն է նաև Աֆղանստանի գործոնը։ Ամերիկյան զորքերի դուրսբերումը կարող է տարածաշրջանում բավականին

լուրջ անվտանգային խնդիրներ ձևավորել: Աշխարհագրորեն, Աֆղանստանը կարևորագույն նշանակություն ունի չինական նախագծի կյանքի կոչման համար: Աֆղանստանում, հետևաբար նաև Կենտրոնական Ասիայում քաղաքական անկայունության պատճառով չինական նախագծի իրագործումը կարող է խաթարվել կամ դանդաղել: Սա ևս մեկ նշանակալի գործոն է չինական և ամերիկյան նախագծերի մրցակցության առումով:

Մի բան հստակ է: «B3W» և «BRI» նախագծերի, ինչպես նաև դրանց հիմնական հեղինակների՝ ԱՄՆ-ի և Չինաստանի միջև մրցակցությունը շարունակելու է լինել կոշտ և անզիջում:

The G-7's "Build Back Better World" Project as a Countermeasure to China's "Belt and Road" Initiative

SUREN SARGSYAN
Brusov State University

ANAHIT MURADYAN
Brusov State University

AIDA GEVORGYAN
Brusov State University

The purpose of this article is to study the features and basic principles of the global infrastructure project "Build Back Better World" (B3W) announced at the G7 summit in June 2021. The article particularly emphasizes the prospect of this project to become the most serious challenge for the Chinese "Belt and Road" ("BRI") initiative. It also reveals the consequences of the withdrawal of US troops from Afghanistan for the Chinese "BRI" project. To achieve the stated goal, the article addresses the following issues: the identification of the potential, challenges and obstacles of the "B3W" project, the prospects of its probable competition with the Chinese "BRI" initiative, as well as the possibilities of Armenia's involvement in the "B3W" project.